

Համարը N 421
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ընդունման ամսաթիվը 16.11.2004
Ստորագրման ամսաթիվը 16.11.2004
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎ ԱՆՁԻՑ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՉ ԴԱՐՏԱԴԻՐ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 421

ք.Ստեփանակերտ

ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎ ԱՆՁԻՑ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՉ ԴԱՐՏԱԴԻՐ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.
Հաստատել **քրոզտագործման** թույլտվությունը մեկ անձից այլ անձի փոխանցելու պայմանագրի օրինակելի ոչ պարտադիր ձևը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի "16"-ի
թիվ 421 որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՉ ԴԱՐՏԱԴԻՐ ԶԵՎ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎ ԱՆՁԻՑ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ

_____ 200 թ.
(կնքման վայրը)

(**քրոզտագործման** թույլտվություն ունեցող անձի անվանումը)

(այսուհետ՝ փոխանցող), ի դեմս _____ -ի,

որը գործում է _____
(կանոնադրություն, **քրոզտագործման** թույլտվության համարը, ամիսը, անվանումը)

հիման վրա, մի կողմից, և _____

(**քրոզտագործման** իրավունք ձեռք բերող իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)
այսուհետ՝ ընդունող, ի դեմս _____

(ընդունողի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

որը գործում է ընդունողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 200 թ. _____ N _____ որոշման՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրի համաձայն փոխանցողն ընդունողին է փոխանցում N _____ **ջրօգտագործման** թույլտվությամբ իրեն տրված իրավունքը (կամ դրա մի մասը), իսկ ընդունողը պարտավորվում է ընդունել այն՝ դրանից բխող պարտավորությունների պարտադիր կատարման պայմանով:

1.2. **ջրօգտագործման** թույլտվության իրավունքի փոխանցման պայմանագրի անբաժանելի մասին է կազմում հանձնման-ընդունման ակտը:

1.3. Պայմանագրի անբաժանելի մասն է նաև **ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի փոխանցմամբ պայմանավորված՝ փոխանցողի և ընդունողի միջև կնքված, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից հաստատված պայմանները:

1.4. Փոխանցողը երաշխավորում է, որ այլ ջրօգտագործողների կողմից **ջրօգտագործման** թույլտվությունը շահարկման առարկա չէ, և **ջրօգտագործման** իրավունքների կասեցման (սահմանափակման) վերաբերյալ նշված **ջրօգտագործման** թույլտվության մեջ այլ սահմանափակումներ չեն եղել:

1.5. **ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չի հանդիսանում սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Փոխանցողն իրավունք ունի՝

2.1.1. ընդունողից պահանջելու իրականացնել **ջրօգտագործման** թույլտվության պահանջները՝ սույն 1.3-րդ կետում նշված պայմանների համաձայն,

2.1.2. _____
(այլ իրավունքներ՝ կախված **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման ձևից)

2.2. Փոխանցողը պարտավոր է՝

2.2.1. **ջրօգտագործման** թույլտվությունը՝ կից փաթեթով, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում հանձնել ընդունողին,

2.2.2. ընդունողի պահանջով տալ պարզաբանումներ մինչև **ջրօգտագործման** թույլտվության իրավունքի փոխանցումն իրականացված **ջրօգտագործման** վերաբերյալ, որն անհրաժեշտ է ընդունողին **ջրօգտագործման** իրավահարաբերությունները հստակեցնելու համար,

2.2.3. ջրամատակարար լինելու դեպքում **ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի փոխանցման վերաբերյալ ստանալ այդ ջրօգտագործմամբ պայմանավորված ջրօգտագործողների համաձայնությունները (պայմանները), որոնք հանդիսանալու են սույն պայմանագրի և **ջրօգտագործման** թույլտվության անբաժանելի մասը,

2.2.4. _____
(այլ իրավունքներ՝ կախված **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման ձևից)

2.3. Ընդունողն իրավունք ունի՝

2.3.1. փոխանցողի կողմից **ջրօգտագործման** թույլտվության համաձայն-ընդունման ակտում չհայտարարված, հետագայում **ջրօգտագործման** իրավունքի իրականացմանը խոչընդոտող հանգամանքների հայտնաբերման դեպքում փոխանցողից պահանջելու անհատույց վերացնել այդ խոչընդոտները կամ հատուցել դրանց վերացման համար պահանջվող ծախսերը,

2.3.2. _____
(այլ իրավունքներ՝ կախված **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման ձևից)

2.4. Ընդունողը պարտավոր է՝

2.4.1. ջրօգտագործումն իրականացնել **ջրօգտագործման** թույլտվության և օրենքով սահմանված այլ պահանջների համապատասխան,

2.4.2. կատարել **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման հետ կապված՝ պահանջվող բոլոր ծախսերը,

2.4.3. փոխանցողի ջրամատակարար լինելու դեպքում կատարել սույն պայմանագրի 2.2.3.-րդ կետում նշված ջրօգտագործողների պայմանները,

2.4.4. պայմանագիրն ստորագրելուց և նոտարական կարգով վավերացնելուց հետո 10-օրյա ժամկետում կատարել պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված գործողությունները,

2.4.5. _____
(այլ իրավունքներ՝ կախված **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման ձևից) _____ :

3. Պայմանագրի գործողության ժամկետը

3.1. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև _____ :

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել **ջրօգտագործման** թույլտվության ժամկետից ոչ ավելի:

3.2. Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված, եթե պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս առաջ (եթե պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է 6 ամսվանից պակաս՝ 15 օր) կողմերից որևէ մեկը չի դիմել՝ այն դադարեցնելու կամ վերանայելու համար, և երկարաձգման մասին կողմերի հայտին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ տվել է դրական եզրակացություն:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Փոխանցողի պատասխանատվությունը

4.1.1. Փոխանցողը պատասխանատվություն չի կրում **ջրօգտագործման** թույլտվության իրավունքի իրականացման այն խոչընդոտների համար, որոնք՝

- ա) ինքը նշել է պայմանագիրը կնքելիս,
- բ) նախապես հայտնի են եղել ընդունողին,
- գ) հայտնաբերվել են ընդունողի կողմից պայմանագիրը կնքելիս,
- դ) հայտնաբերվել են **ջրօգտագործման** թույլտվության փաստաթղթերի հանձնման ժամանակ **ջրօգտագործման** պայմանները զննելիս:

4.2. Ընդունողի պատասխանատվությունը

4.2.1 Ընդունողը պարտավոր է փոխանցողի ջրամատակարար լինելու դեպքում փոխհատուցել **ջրօգտագործման** թույլտվությամբ պայմանավորված՝ այլ ջրօգտագործողների կողմից մինչև սույն պայմանագրի կնքումն առաջադրված պայմանների չկատարման հետևանքով նրանց հասցրած վնասները:

5. Այլ պայմաններ

5.1. Ընդունողի վերակազմակերպման դեպքում **ջրօգտագործման** թույլտվության փոխանցման պայմանագրով ընդունողի իրավունքներն ու պարտականություններն անցնում են նրա իրավահաջորդին՝ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն:

5.2. Պայմանագրից բխող վեճերը կարող են լուծվել փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

5.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա կնքման օրվանից սկսած 10-օրյա ժամկետում ջրային պետական կադաստրում գրանցման պահից:

5.4. Պայմանագիրը կնքվում է 4 հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակը տրվում է կողմերին, մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում և մեկ օրինակը՝ ջրային պետական կադաստրում:

6. Կողմերի գտնվելու վայրերը և ստորագրությունները

Փոխանցող	Ընդունող
_____	_____
անվանումը	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը	_____

կաշտոնատար անձի անունը, ազգանունը

ստորագրությունը

200 թ.

200 թ.

**ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան